ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

13 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 30** քաղ. Մոսկվա

Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման ներուժի զարգացման ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համաձայնեցված գործողությունների մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 94 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության վերաբերյալ հայեցակարգի իրագործման միջոցառումների ծրագրի 11-ին կետին համապատասխան,

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 95-րդ հոդվածի 7-րդ կետի 10-րդ ենթակետի հիման վրա,

գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման ներուժը զարգացնելու, ինչպես նաեւ երրորդ երկրների շուկաներում Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (այսուհետ՝ անդամ պետություններ) արտադրված գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի խթանման համար համագործակցության զարգացման պայմաններ ստեղծելու նպատակներով,

հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի համաշխարհային շուկայի զարգացման կանխատեսումները՝

հանձնարարում է անդամ պետություններին Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն Հանձնարարականը հրապարակելու օրվանից գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման զարգացմանն ուղղված միջոցների մշակման եւ իրագործման ժամանակ, ինչպես նաեւ արտաքին տնտեսական գործունեության զարգացման հեռանկարների սահմանման ժամանակ հաշվի առնել՝

ա) Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում հրապարակվող եւ մշտական հիմունքով թարմացվող՝

անդամ պետություններում եւ գյուղատնտեսական արտադրանքի ու պարենի առաջատար արտահանող երկրներում կիրառվող՝ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման աջակցության միջոցների ու մեխանիզմների մասին ամփոփ ակնարկը.

միս եւ մսամթերք, կաթ եւ կաթնամթերք, հացահատիկ, բուսական ծագման յուղեր եւ շաքար ներմուծող հիմնական երկրների ցանկը, ինչպես նաեւ տվյալ երկրներ այդ ապրանքների ներմուծումը կարգավորելու առանձնահատկությունները, որոնք սահմանվել են գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի համաշխարհային շուկաների իրավիճակի վերլուծության արդյունքում.

բ) անդամ պետությունների համար ընդհանուր՝ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի իրացման գործող շուկաների ցանկը՝ համաձայն հավելվածի։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 30 հանձնարարականի

ՑԱՆԿ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համար ընդհանուր՝ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի իրացման գործող շուկաների*

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ խումբ	Իրացման շուկաներ
01. Կենդանի կենդանիներ	Չինաստան, Մոնղոլիա, Տաջիկստան, Ուզբեկստան
02. Միս եւ մսից սննդային ենթամթերքներ	Չինաստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Ուկրաինա
03. Ձկներ եւ խեցգետնանմաններ, կակղամորթներ եւ ջրային այլ անողնաշարավորներ	Վրաստան, Դանիա, Գերմանիա, Չինաստան, Լիտվա, Նիդեռլանդներ, Լեհաստան, ԱՄՆ, Ուզբեկստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Էստոնիա
04. Կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր, կենդանական ծագման սննդամթերքներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված	Վրաստան, Չինաստան, Մոլդովա, ՄԱԷ, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա
05. կենդանական ծագման մթերքներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված	Վիետնամ, Չինաստան, Կորեայի Հանրապետություն
07. Բանջարեղեն եւ որոշ ուտելի արմատապտուղներ եւ	Աֆղանստան, Գերմանիա, Վրաստան, Լիտվա, Հնդկաստան, Իրան, Մոլդովա, Տաջիկստան,

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ խումբ	Իրացման շուկաներ
պալարապտուղներ	Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա
08. Ուտելի մրգեր եւ ընկույզներ, ցիտրուսային պտուղների կեղեւ կամ սեխի կճեպներ	Գերմանիա, Իրաք, Չինաստան, Լիտվա, Մոնղոլիա, Տաջիկստան, Ուզբեկստան, Էստոնիա
09. Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ եւ համեմունքներ	Գերմանիա, Վրաստան, Չինաստան, Մոնղոլիա, Տաջիկստան
10. Հացազգիներ	Գերմանիա, Վրաստան, Իրան, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Նորվեգիա, ՄԱԷ, Լեհաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան
11. Ալրաղացաձավարային արդյունաբերության արտադրանք, ածիկ, օսլաներ, ինուլին, ցորենի սոսնձանյութ	Աֆղանստան, Վրաստան, Չինաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան
12. Յուղատու սերմեր եւ պտուղներ, այլ սերմեր, պտուղներ ու հացահատիկներ, դեղաբույսեր եւ տեխնիկական նպատակների համար օգտագործվող բույսեր, ծղոտ եւ կեր	Ավստրիա, Աֆղանստան, Բելգիա, Գերմանիա, Վրաստան, Իրան, Չինաստան, Լատվիա, Մոնղոլիա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Կորեայի Հանրապետություն, Ուզբեկստան
15. Կենդանական կամ բուսական ծագման ճարպեր եւ յուղեր ու դրանց տրոհումից ստացվող մթերքներ, պատրաստի սննդաճարպեր կենդանական կամ բուսական ծագման մոմեր	Աֆղանստան, Գերմանիա, Չինաստան, Լիտվա, Նորվեգիա, Տաջիկստան, Ուզբեկստան, Ուկրաինա
16.Պատրաստի մթերքներ մսից, ձկից	Վրաստան, Չինաստան, Մոլդովա, Տաջիկստան,

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ խումբ	Իրացման շուկաներ
կամ խեցգետնակերպերից, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորներից	Թուրքմենստան, Ուկրաինա
17. Շաքար եւ հրուշակեղեն շաքարից	Գերմանիա, Վրաստան, Չինաստան, Լիտվա, Մոնղոլիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա
18. Կակաո եւ դրանից պատրաստված մթերքներ	Գերմանիա, Վրաստան, Չինաստան, Մոնղոլիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա
19. Պատրաստի մթերքներ հացաբույսերի հատիկներից, ալյուրից, օսլայից կամ կաթից, ալրային հրուշակեղեն	Գերմանիա, Վրաստան, Չինաստան, Մոլդովա, Մոնղոլիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա
20. Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերքներ	Չինաստան, Մոնղոլիա, ԱՄՆ, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա
21. Տարբեր սննդամթերքներ	Գերմանիա, Վրաստան, Չինաստան, Լատվիա, Մոլդովա, Մոնղոլիա, ՄԱԷ, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան
22. Ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային խմիչքներ եւ քացախ	Գերմանիա, Վրաստան, Չինաստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Մոնղոլիա, ՄԱԷ, ԱՄՆ, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Չեխիա
23. Սննդարդյունաբերության մնացորդներ եւ թափոններ,	Գերմանիա, Վրաստան, Դանիա, Իրան, Չինաստան, Լատվիա, Մոնղոլիա, Նորվեգիա, Լեհաստան,

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ խումբ	Իրացման շուկաներ
կենդանիների համար պատրաստի կերեր	Տաջիկստան, Ուզբեկստան, Շվեդիա
24. Ծխախոտ եւ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	Վրաստան, Իրաք, Մոնղոլիա, Սիրիա, Թուրքմենստան, Ուկրաինա

*2014-2015 թվականներին Եվրասիական տնտեսական միության ապրանքների արտաքին առեւտրի մաքսային վիճակագրության տվյալներով: